

ՍԵՐՎԻՉԻՆ ՀԱՍԱՆ

– Վե՛ր կաց, Կոպրադին, հեռո՛ւ կանգնիր դու,
Իմ հոր ոսկին է – ես եմ չափելու:
Հովհաննես Թումանյան, «Սասունցի Դավիթը»

Ապրիլի 13-ին հայտնի դարձավ, որ Մեսրոպ Մաշտոցի անվան Մանտենադարանի եւ Ամերիկյան Հիլ թանգարանի միջեւ ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության հովանավորությամբ կնքվել է Մատենադարանի ձեռագրերի թվայնացման մասին պայմանագիր, ըստ որի ամերիկյան թանգարանը «աստված մի արասցե» որեւէ վերահաս արհավիրքից մեր ձեռագրերը «փրկելու» համար պիտի թվայնացնի դրանք (այն է՝ ստեղծի դրանց թվային պատճենները) եւ որպէս փոխհատուցում՝ ստանա պահվող շուրջ 14 հազար ձեռագրերի թվային պատճենները եւ դրանցից օգտվելու իրավունքը (հեղինակային իրավունքը՝ պատճենաշնորհը): Այսինքն, արդյունքում ամերիկացիների ձեռքում կհայտնվի մեր ազգային ամենամեծ հարստություններից մեկի՝ Մատենադարանի ճշգրիտ պատճենը:

Ցանկացած մարդու համար, ով գիտակցում է, որ թվային տեխնոլոգիաների դարում թվային որակյալ պատճենը ոչ միայն գրեթե փոխարինում է բնագիրը, այլեւ լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում օգտագործողին, պարզ է, որ ըստ եռության, թվայնացման անվան տակ Մատենադարանը վաճառվում է ամերիկացիներին: Առաջին միտքն այն էր, որ Մատենադարանը հերթական կորուստն է լինելու Արմենթեյի, Կոնյակի գործարանի, Չվրաթնոց օդանավակայանի, բաշխիչ ցանցերի, ջրմուղ-կոյուղու, Հայֆիլմի եւ մյուսների շարքում՝ «հոյակապ» գործարքների, որոնք այլընտրանք չունեին. եթե այս հիմնարկները չվաճառվեին Հայաստանը, պետք է կարծել, կկործանվեր: Մի սրամիտ մարդ այս հերթական գործարքը գնահատեց «Կովկասի գերուհու» կինոհերոսի խոսքերով. «Սերվիզին հասան»: Այս դառը կատակն արտահայտությունն էր զարմանքի, զայրույթի եւ, միաժամանակ՝ անգորության զգացումի, քանի որ վաճառվողների շարքում հայտնվել էր մի արժեք, որն ի տարբերություն նախորդների, թվում էր, պաշտպանված է համազգային սրբության վահանով:

Բայց այս պատմությունը վաղուց էր սկսվել: Առնվազն, երբ Հայաստանի խորհրդայնացման արշալույսին որոշվեց հրաժարվել մաշտոցյան այբուբենից եւ ուղղագրությունից: Սա «հոյակապ» ծրագիր էր. շահարկելով այբուբենի ստեղծման՝ մաշտոցյան սկզբունքները, որոշվեց փոխել հայոց լեզվի գրային համակարգը, որպեսզի այն դառնա իսկական այբբենական համակարգ: Գտնվեցին իհարկե ինչ-որ գրողներ, բանաստեղծներ, եւ այլ դիլետանտներ, որոնք քննադատեցին այդ ծրագիրը, մասնավորապես նկատելով, որ այն ընդամենը առաջին փուլն է՝ լատինական այբուբենին անցնելու: Բայց «հանճարեղ» ծրագիրն իրագործվեց: Իսկ 18 տարի անց, երբ բացահայտվեց այդ ծրագրի սևանկությունը, այբուբենը, *մասամբ* էլ՝ ուղղագրությունը, ճարահատյալ վերականգնեցին (միայն «վյունի» բախտը չբերեց)...

Հետո որոշվեց ցամաքեցնել Սեւանա լիճը: Ինչպես գիտենք, սա նույնպես «հոյակապ» ծրագիր էր. աղբատ, թշվառ Հայաստանը, մի կողմից ստանում էր էլեկտրաէներգիա, մյուս կողմից՝ ոռոգման ջուր, իսկ ցամաքած տարածքները դառնում էին վարելահող: Կրկին գտնվեցին հետադիմականներ, ինչ-որ պոետներ, նկարիչներ, մի խոսքով՝ ոչ մասնագետների «կաստայացած» շերտեր, որոնց դա դուր չէկավ: Բայց «հանճարեղ» ծրագիրն իրագործվեց: Իսկ հետո ճարահատյալ կառուցեցին Արփա-Սեւան ջրանցքը...

Արդեն մեր ժամանակներում որոշվեց կառուցել Ալեքսանդր Թամանյանի նախատեսած Հյուսիսային պողոտան: Կառուցե՛լ: Հոյակապ է: Իսկ դրա համար, որոշվեց... *քանի* մի շարք ճարտարապետական *հուշարձաններ*, խախտել հենց Թամանյանի քաղաքաշինական սկզբունքները: Կրկին հայտնվեցին ինչ-որ դժգոհող անձինք, սակայն սրանց ձայնն, ի տարբերություն խորհրդային տարիների, առհասարակ լսելի չեղավ: Եւ ծրագիրն իրագործվեց: Իսկ հետո էլ քանդեցին նաեւ մի քանի այլ՝ Հյուսիսային պողոտայի հետ կապ չունեցող արժեքավոր շենքեր. հավանաբար նույնպես իրագործելով Ալեքսանդր Թամանյանի երազանքները:

Հետո ցանկացան ուղղել հին սխալներից մեկը: Ուղղե՛լ: Հիասքանչ է: Եւ դրա համար որոշվեց... *քանի*... նախկինում քանդված Կոթողիկե եկեղեցու տեղում կառուցված Լեզվի ինստիտուտի շենքը: Ոչինչ,

որ Լեզվի ինստիտուտի շենքը ի՛նքն էր արդեն դարձել պատմական եւ ճարտարապետական հուշարձան: Ոչինչ, որ դա Լեզվի ինստիտուտն էր: Կարելորդ՝ որոշումն է: Ի դեպ, հենց այս պահին մեր բոլորի լուռ համաձայնությամբ Լեզվի ինստիտուտի շենքի քանդումը շարունակվում է:

Իսկ հետո... այսինքն հիմա. հենց հիմա, հասավ Մատենադարանի հերթը: Ընթացքի մեջ է եւս մի «հոյակապ» գործարք: Ավելորդ է ասել, որ, ինչպես եւ հիշատակված Նախորդ դեպքերում այս գործարքը նույնպես ներկայացվում է, որպես «հիանալի համաձայնագիր», որի շնորհիվ Մատենադարանի գանձերը «փրկվում են»: Ինչպես եւ այլ դեպքերում, կա եւ համապատասխան հեղինակությունը՝ Մատենադարանի Նախկին տնօրեն Լեւոն Խաչիկյանը՝ որի, իբր, «երազանքն էր» անել դա: (Փակագծերում նկատենք, որ Խաչիկյանի օրոք պատճենահանման եղանակները շատ հեռու էին այսօրվա թվանշային մակարդակից, որպեսզի իրավունք ունենանք պնդելու, թե այն ինչ այսօր փորձում են անել, հենց նրա երազածն է:)

Ինչպես եւ Նախորդ դեպքերում, այսօր նույնպես հնչում են հարյուրավոր մտավորականների ձայներ, կոչ անելով չեղյալ հայտարարել վտանգավոր գործարքը, եւ ինչպես Նախորդ դեպքերում դեմ արտահայտվողները պիտակավորվում են որպես «բամբասողներ», «անձնական շահեր» հետապնդողներ, «տգետներ», «սեւ PR-ով զբաղվողներ». ծանոթ որակումներ են, ծանոթ գործելակերպ է...

Առահասարակ, վաճառքի կողմնակիցների փաստարկները հանգում են հետեւյալ պնդումներին.

ա. ձեռագրերը վերականգնման կարիք ունեն, պետությունը դրա համար միջոցներ չունի, իսկ Դիլլը տալիս է այդ միջոցները:

բ. Հնարավոր աղետի դեպքում փրկելու համար գոնե ձեռագրերում պարունակվող տեղեկությունը անհրաժեշտ է ունենալ դրանց բարձրորակ պատճենները:

գ. Հայաստանը ֆինասապես ի վիճակի չէ իրագործել թվայնացումը: Իսկ եթե նույնիսկ դա հնարավոր լիներ, ապա՝

դ. Ապահովության համար պատճենները պիտի պահվեն Հայաստանից դուրս, ուստի երրորդ կողմի մասնակցությունը կենսական անհրաժեշտություն է:

ե. Դիլլ թանգարանը վստահելի կազմակերպություն է, եւ կարելի է, վստահ լինել, որ նրանք չեն խախտի Մատենադարանի հեղինակային իրավունքները:

Քննենք այս պնդումները:

Առաջին դրույթը պայմանագրի կողմնակիցների ամենաազդեցիկ փաստարկներից է: Մինչդեռ պայմանագրից պարզվում է, որ ձեռագրերի վերականգնման պարտականությունը Մատենադարանինն է եւ Դիլլը չի պարտավորվում ֆինանսավորել այն:

Երկրորդ դրույթը ոչ ոք չի էլ վիճարկում: Հակառակը, մասնագիտական շրջաններում Մատենադարանի ղեկավարությունը միշտ էլ քննադատվել է հենց թվայնացում չիրագործելու համար, քանի որ այն անհրաժեշտ է ոչ միայն նյութերի ապահովության համար, այլեւ ժամանակակից եղանակներով դրանց ուսումնասիրման համար:

Ինչ վերաբերում է *երրորդ պնդմանը*, ապա դժվար է համաձայնել, որ պետությունն ի վիճակի չէ ինքնուրույն թվայնացնել Մատենադարանի գանձերը. ցանկություն լինել: Ի՛նչ գումարներ կարող են անհրաժեշտ լինել: Թվում է, թե նման ծրագիրը պիտի կապված լինի շատ լուրջ գումարների հետ: Եւ իրոք, կրթության Նախարարը խոսում է 80–90 մլն դոլարի մասին (ի դեպ, ի վերջո 80⁰, թե՞ 90. Մատենադարանի տնօրենը հայտնում է, որ իրենք չգիտեն, թե ի՛նչ գումար անհրաժեշտ կլինի): Փորձենք սակայն գոնե մոտավոր հաշվարկ կատարել: Եթե ընդունենք, որ միջին ձեռագիրը պարունակում է 400 էջ, ապա 14 հազար ձեռագրերի էջերի քանակը կկազմի մոտ 6 մլն: Ժամանակակից արագագործ սարքերի, օրինակ՝ 12s Copibook գրքի ծրիչի գործածման դեպքում, 1 րոպեում մեկ սարքով կնկարահանվի 10 էջ: Աշխատանքային 8 ժամում կնկարահանվի մոտ 5000 էջ: Աշխատանքային 25 օրում՝ շուրջ 120 հազար: 6 միլիոն էջ թվայնացնելու համար կպահանջվի մոտ 4 տարի: Չորս նման սարք զուգահեռ աշխատեցնելու դեպքում ամբողջ աշխատանքը կկատարվի 1 տարում: Ութ գործարկով, մեկ տեխնիկական եւ մեկ գիտական ղեկավարի ամսական 300 հազար դրամ աշխատավարձի դեպքում (10 հոգու հաշվով, ամսական՝ 3 մլն դրամ) տարեկան կվճարվի 36 մլն դրամ (մոտ 100 հազար դոլար՝ այսօրվա փոխարժեքով): Սարքերը արժեն մոտ 40 հազար դոլար: Չորս սարքի գինը՝ 160 հազար: Աշխատավարձը եւ սարքերը միասին՝ 260 հազար:

Իսկ երկու սարքով (երկամյա ծրագրով) աշխատելու դեպքում գումարը կկազմի մոտ 200 հազար դոլար (սարքի գինը եւ երկու հոգու՝ չորս տարվա աշխատավարձ): Վերջին տարբերակը նախընտրելի է, քանի որ ծրագրի ավարտից հետո թվայնացնող սարքերը (հաշվի առնելով այս բնագավառի սրընթաց զարգացումը) հավանաբար բարոյապես հնացած կլինեն, ուստի եւ ավելորդ սարքեր չարժե ձեռք բերել: Բնականաբար, հաշվի առնելով բազմաթիվ ձեռագրերի վատ վիճակը եւ դրանց զուգահեռ վերականգնման աշխատանքները, բերված թվերը պիտի ճշտվեն. սրանք սոսկ մոտավոր հաշվարկներ են, թեեւ իրականությանը շատ մոտ:

Որոշ գումար կպահանջեն նաեւ պահուստավորման համակարգերը: Եթե միջին էջի չափը ընդունենք A4, ապա դրա պատճենի ծավալը 300կմվ կետայնության դեպքում կկազմի մոտ 25ՄԲ: Եթե կիրառվի սեղմման 10-պատիկ եղանակ՝ 2,5ՄԲ: 6 մլն էջի դեպքում դա կկազմի մոտ 15ՄԲ: Plasmon Enterprise D շարքի D2 175 DVD-գրադարանները կարող են ունենալ շուրջ 20,4ՏԲ տարողություն, եւ արժեն մոտ 30 հազար դոլար: Ժամանակակից տարողունակ կոշտ սկավառակների կիրառությունը էլ ավելի է հուսալի եւ էժան կլինի: Ապահովության համար առնվազն կպահանջվի գոնե եւս մեկ լրացուցիչ DVD-գրադարան կամ կոշտ սկավառակների համակարգ: Հարկերով եւ չնախատեսված ծախսերով ծրագրի ընդհանուր գումարը կկազմի մոտ 300-ից 400 հազար (կախված ծրագրի տեղողությունից):

Ինչպես տեսնում ենք, եթե հաշվի առնենք, որ գործ ունենք ազգային հարստության հետ, դա փող չի: Նույնիսկ մեր պետության համար, որի բյուջեն կազմում է «ընդամենը» 1.5 միլիարդ դոլար, որից գիտությանը հատկացված է 15 մլն դոլար: Կարո՞ղ էր այդ 15 միլիոնից գոնե 400 հազարը հատկացվել ՀԱՅագիտությանը եւ ազգային արժեքների պահպանմանը: Կարծում եմ կարող էր: Անկասկած: Սակայն քննարկումների ընթացքում պարզվեց, որ Մատենադարանի տնօրինությունը երբեք *չի էլ դիմել* կառավարությանը թվայնացումը ֆինանսավորելու խնդրանքով եւ դրա որեւէ ծրագիր չի ներկայացրել եւ այժմ էլ՝ չունի: Ինչո՞ւ: Հանճարեղ պատճառաբանությամբ. միեւնույն է չէին տա:

Չորրորդ դրույթն առհասարակ զավեշտական է, քանի որ մեր իսկ ուժերով պատրաստված թվային պատճենը առանց որեւէ երրորդ կողմի միջամտության հեշտությամբ կարելի է պահել արտասահմանյան բանկային որեւէ պահախցում, պարտավորություն չունենալով սակայն ոչ մեկի առջեւ: Թեպետ հակառակը. նախընտրելի է, որ պատճենը *ոչ մի պատրվակով* Հայաստանի Հանրապետության տարածքից առհասարակ չհանվի: Ի վերջո, Մատենադարանը նման կերպ «փրկելը» հուսահատված մարդու մոտեցում է, ով Հայաստանի վաղվա օրվա հանդեպ հավատ չունի եւ մի ոտքով արդեն Արեւմուտքում է: Մյուս կողմից, սեպտեմբերի 11-ի դեպքը ցույց տվեց, որ Նահանգները նույնպես երաշխավորված չեն ռազմական արհավիրքներից: Իսկ եթե վախ կա բնական աղետներից, ապա լրացուցիչ ապահովության համար բավական է եւս մեկ կամ երկու պատճեն պահել ՄԵԲ երկրի տարբեր վայրերում:

Եւ վերջապես *հինգերորդ դրույթը*: Մատենադարանի տնօրինության այն պնդումը, թե ոչ ոք չի խախտի Մատենադարանի հեղինակային իրավունքները պարզապես ծիծաղելի են, քանի որ կնքված պայմանագրի հրապարակված դրույթներից մեկում պարզ գրված է. «Գիտնականները պետք է համաձայնեն ոչ մի ձեւով չվերարտադրել ձեռագրերի նկարներն առանց Մատենադարանի *եւ «Հիլլ» ձեռագրերի գրադարան-թանգարանի* թույլտվության»: Բացի այդ, 4-րդ հոդվածում կարդում ենք. նկարներից կարող են օգտվել որակյալ մասնագետները: Այդ ինչպե՞ս այսինքն: Այդ ի՞նչ սկզբունքով պիտի գնահատվի մասնագետի որակավորումը: Արդյո՞ք թվային պատկերներից իրավունք կունենան օգտվելու ուսանողները, ասպիրանտները: Եւ ինչո՞ւ այդ ցուցակը պիտի հաստատվի Հիլլում:

Այնպես որ Մատենադարանի սեփական ձեռագրերի նկատմամբ իրավունքների սահմանափակումը արդեն իսկ ներառված է կնքված պայմանագրի մեջ: Էլ ի՞նչ իրավունքների մասին կարող է խոսք լինել: Բայց եթե նույնիսկ այդ կետը չլիներ, եթե ամերիկյան կողմին առհասարակ արգելվեր որեւէ կերպ գործածել պատճեններն առանց Մատենադարանի թույլտվության, միեւնույն է պատճենի հայտնվելը Մատենադարանից դուրս արդեն իսկ նշանակում է վերահսկողության կորուստ: Ռուսական ասացվածքն ասում է. «խոսքը ճնճողկ չէ, դուրս թռչի՝ չես բռնի»: Այդպես պատկերավոր ժողովուրդը նկատել է մտավոր եւ նյութական սեփականությունների տարբերությունը: Եւ պետք է գիտակցել, որ ի տարբերություն բաշխիչ ցանցերի կամ Արմենթելի վաճառքի, ա՛յս վաճառքն անդարձելի է: Հայտնի է, որ ներկայումս նույնիսկ

այնպիսի հսկաներ, ինչպիսիք են հողի վուոյան ընկերությունները կամ Մայքրոսոֆթը, չեն կարող ապահովել իրենց արտադրանքի անձեռնմխելիությունը: Եւ ի վերջո, ցանկացած օրենք կարող է խախտվել չարագործների կողմից եւ ցանկացած պայմանագիր՝ ընդամենը թուղթ է: Համենայն դեպս «Հարձակվելու մասին» համաձայնագրի կնքումը չխանգարեց Գերմանիային 1941 թվին հարձակվել Խորհրդային Միության վրա, իսկ այսպես կոչված միջազգային իրավունքի նորմերը չխանգարեցին Հիլլ թանգարանի հայրենիքին՝ Միացյալ Նահանգներին ընդամենը երկու տարի առաջ կողոպտել Իրաքի պատմական թանգարանները:

Բացի վերոհիշյալ դատողություններից կան եւ այլ՝ գիտական եւ բարոյական փաստարկներ: Դրանք բազմիցս հնչել են, ուստի պարզապես թվարկեմ դրանցից ամենակարեւորները:

ա. Այլոց հանձնել Մատենադարանի նմուշներն ամբողջովին՝ որպես *համակարգ* (այլ ոչ թե առանձին պատճեններ՝ առանձին մասնավոր եւ որոշակի հայտերի համաձայն) հնարավորություն տալով այլ երկրում ստեղծել Մատենադարանի կրկնօրինակը, նշանակում է վերացնել Մատենադարանի, որպես ազգային գանձարանի եզակիությունը, որը հղի է բազմաթիվ վտանգներով՝ ընդհուպ մինչեւ *համակարգված* կեղծարարություն: Դա նշանակում է նպաստել Հայաստանից դուրս հայկական ձեռագրերի ամենամեծ հավաքածույի ստեղծմանը (Հիլլը մտադիր է գնել, կամ արդեն գնել է, արտասահմանյան հայերեն այլ ձեռագրատների պատճենները), դրանով իսկ զրկելով Հայաստանը ի՛ր իսկ մշակութային ժառանգության նկատմամբ մենաշնորհից: (Հետաքրքիր է, մենք հնարավոր ենք գտնում հանդուրժել, օրինակ, Արմենթելի մենաշնորհային պատկանելությունը այլերկրյա տերերին, եւ պատրաստ ենք հրաժարվել մենաշնորհից մեր իսկ նախնիների ժառանգության նկատմամբ):

բ. Մատենադարանի հավաքածուն կազմված է հազարավոր հայերի կյանքի գնով փրկված ձեռագրերից, եւ ի դեմս Մատենադարանի դրանց տերերը նվիրել են ձեռագրերը հայոց ազգին այլ ոչ թե Հիլլ թանգարանին, եւ այսօր ոչ միայն Մատենադարանի տնօրինությունը, այլեւ նույնիսկ Հայաստանի կառավարությունը դրանք առ ու ծախսի առարկա դարձնելու բարոյական իրավունք չունի:

գ. Մատենադարանը չունի իր ձեռագրերի ավարտուն Մայր ցուցակ, այնպիսիք՝ նմուշները չունեն լիակատար *գիտական* նկարագրություն, հետեւապես խելամիտ չէ տրամադրել որեւէ մեկին չնկարագրված որեւէ ձեռագրի պատճեն: Իսկ առայժմ 14 հազար ձեռագրերից մինչ այսօր նկարագրվել է ընդամենը 900 ձեռագիր՝ այն էլ դեռ նախորդ տնօրենի օրոք՝ 20 տարի առաջ: Նկարագրելու ընթացքը վերսկսվել է միայն վերջին տարիներին, իսկ Մայր ցուցակի սպասվելիք շուրջ 30 հատորներից տպագրվել է սոսկ երկուսը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Մատենադարանի տնօրինության կնքած պայմանագիրը չի բխում հայոց մշակութային արժեքների պահպանության շահերից, չափազանց վտանգավոր է եւ անհապաղ պիտի կասեցվի: Ձեռագիր գանձերի թվայնացման գործում տնօրինությունը թույլ է տվել հանցավոր դանդաղկոտություն, քանի որ վերոհիշյալ ծավալով գործը կարելի էր մի քանի տարի առաջ արդեն իսկ ավարտել եւ անցնել ձեռագրերի բնօրինակների վերականգնման խնդիրներին, եւ միաժամանակ թվային եղանակներով դրանց նկարագրման եւ ուսումնասիրման փուլին: Եւ այդ դեպքում չէին հայտնվի կասկածելի արեւմտյան կազմակերպություններ պղտոր ջրում գանձեր կորզելու ակնկալիքով:

Ռուբեն Թարումյան
27.04.2007